ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է Լոռու Անտառաշեն համայնքի
ավագանու 2019 թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 24-Ն որոշմամբ

ԱՆՏԱՌԱՇԵՆ 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն..... 3
2. Համառոտ տեղեկություն.....
Պատմական ակնարկ..... 4
3. Անտառաշեն համայնքի տեսլականը .....
4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն .....
5. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն.....
6. Առաջնահերթ հիմնահարցերի վերլուծություն .....
7. Ռազմավարության սահմանում .....

1. Ներուծություն

Համայնքի սոցիալ- տնտեսական զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է , որը մշակում է համայնքապետի և նրա աշխատակազմի կողմից քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից, դրվում է գործողության մեջ: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության , սոցիալ-տնտեսական, ներքին իրավիճակի համալիր գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների (բնական,աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային) հաշվառման արդյունքում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատել են նաև ֆինանսական ռեսուրսները և առաջարկված ծրագրերից ակնկալող արդյունքները:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լոռու մարզի Անտառաշեն համայնքը ստեղծվել է 1937 թվին Խորհրդ. միության կողմից ովքեր փորձնական նպատակով բազմացրել են 25-30 արծաթափայլ աղվես, որը հետագայում հիմք է հանդիսացել Գազանաբուծական տնտեսության համար: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1900 մ. բարձրության վրա, շրջապատված է կանաչազարդ անտառներով, բարձրադիր լեռներով, լեռներից հոսող գետը հասնում է անմիջապես գյուղի ջրամբարը, որը բնակչությանը բավարարում է ամբողջությամբ: Գյուղի կլիմայական պայմանները բարենպաստ են. ձմեռը ցրտաշունչ իսկ ամառը զով: Ինչպես հանրապետության մյուս շրջաններում, այնպես էլ մեր մոտ վերջին տարիներին բնության անբարենպաստ պայմաններից տուժում է գյուղատնտեսությունը: Գյուղացիական տնտեսության զբաղմունքը՝ անասնապահությունն է ու հողագործությունը, իսկ նախկինում զբաղվել են գազանաբուծությամբ:

Կարևոր է նշել, որ երկար տարիներ զբաղվելով գազանաբուծությամբ տալով հանրապետությանը մեծ եկամուտներ: տնտեսությունը միակն է եղել նույնիսկ արտասահմանյան երկրներում ուր արտահանվել է ոսկեփայլ մորթի: Եթե 1937 թվին միությունը ունեցել է 25-30 գազան ապա 1988 թվին արտահանվել է 17000 կզաքիսի, 10000 աղվեսի մորթի պաշտպանելով մայրական կազմը: 1990թ. տնտեսությունը կանգնել է փլուզման եզրին, որը շարունակվեց մինչև 1994թ.-նը: Այդ օրվանից սկսած համայնքը զրկվել է գրեթե ամեն ինչից: Երբ ամենուր կատարվում է կատարվում էր սեփականաշնորհման գործընթացը, մեր համայնքում այն չիրականացավ: Համաձայն ՀՀ Գերագույն խորհրդի 31-ը հոկտեմբերի 1991 թ.-ի որոշման Անտառաշենը առանձնացվել է Լերմոնտովոյի գյուղական խորհրդից, դարձել ինքնուրույն: Համայնքի վարչական տարածքը 1043,27 հա. մշտական բնակչությունը 276 մարդ է, համայնքը չունի գազ դպրոց, բուժկետ: Մարդիկ զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Անտառաշեն համայնքը առաջիկա հինգ տարիների ընթացքում ակնկալում է բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օգտագործելով սեփական ռեսուրսները և բարերարների կարողությունները: Անհրաժեշտ է համայնքում ստեղծել երիտասարդ սերնդի համար մշակույթային, սպորտային կենտրոններ, գյուղը գազաֆիկացնել:

4.Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

4.1.Համայնքը ունի 94 տնային տնտեսություն, որից առկա է 84-ը:

Մշտական բնակչությունը կազմում է 243 մարդ: Առկա բնակչության թիվը 233 մարդ, որից 126 տղամարդ, 107 կին: Համայնքում բնակվում են ռուսներ և հայեր:

Համայնքուընտանեկան նպաստ ստանում են 24 ընտանիք:

Միայնակ չաշխատող կենսաթոշակառու՝ երեքն են:

2015 թ-ից մշտական բնակչության մեկնող չենք ունեցել, ինչպես նաև չունենք նոր բնակիչներ:

Արտագնա աշխատանքի մեկնողների թիվը կազմում է մոտ 25-30 մարդ:

Զբաղվածություն

Համայնքի զբաղված բնակչության թվականը 118-ն է, որից 118-ը ընդգրկված է գյուղատնտեսական գործունեության մեջ (ինքնազբաղվածություն և վարձու) աշխատանք: Ոչ գյուղատնտեսության ոլորտում ընդգրկված են 8 մարդ մասնավորապես պետական մարմիններում համայնքի ղեկավար, համայնքային 2 ծառայող տեխնիկական սպասարկման աշխատող՝ 1-ը, 2-ը պայմանագրային զինծառայող, 1-ը գազի գրասենյակում և մեկը մասնավոր սեկտրում: Համայնքը ունի 30 աշակերտ որոնք հաճախում են հարեվան Լերմոնտովոյի դպրոցը՝ համայնքապետարանի ավտոբուսով, ունենք 3 ուսանող բանակում ծառայում են 4-ը:

Համայնքում չեն գործում սոցիալական ծառայություններ, Նոտարական գրասենյակ, ԶԱԳՍ-ի բյուրո, աղետների ռիսկերի նվազեցման համակարգող մարմին և այլ կառույցներ: Թվարկված ծառայությունները հասանելի են Անտառաշեն համայնքից 16-կմ հեռավորության վրա գտնվող մարզկենտրոնում՝ Վանաձորում: Գյուղատնտեսական զբաղվածությունը համայնքում արդյունավետ չէ և դա լրջագույն պատճառ է հանդիսանում դեպի Ռուսաստան արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թվի տարեցտարի ավելանալու համար: Արտագնա աշխատանքի մեկնողները հիմանականում երիտասարդներ են:

4.1.3. ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ և ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒՅՈՒՆ

Անտառաշեն համայնքի վարչական տարածքը կազմում է 1043,23 հա որից 701,17 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը: Վարելահողերը կազմում են 22,12 հա, որից սեփականաշնորհված 0,26 հա, բնակելի շինությունների տակ 16,22 հա, արդյունաբերական, արտադրականա շինությունների տակ՝ 16,06 հա, ճանապարհների տակ `0,79 հա անտառային հողեր՝ 296,61, ջրային ֆոնդի հողեր՝ 0,78 հա, այլ նշանակության՝ 9,64 հա, խոտհարք՝ 562,02 հա, որից վարձակալության 30,37 հա: Գյուղատնտեսության արտադրության կազմակերպումը լրջորեն խոչնդոտում են բնակլիմայական պայմանները, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարման տարբեր ձևերի արմատավորման դանդաղ ընթացքը: Համայնքում մշակվում է 13,0 հա կարտոֆիլ, 6,0 հա բանջարանոցային մշակաբույսեր:

Համայնքում մինչև օրս ներդրումներ կամ այն աղբյուրներից գումարներ չեն ստացվել, իսկ համայնքապետարանում ֆինանսները բացակայում են և չեն բավարարում: Համայնքում բոլոր Աշխատանքները կատարվում են ձեռքով:

Անասնապահություն: Անտառաշեն համայնքում առկա է՝ 175 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից 99 կոճղավոր, մանր եղջերավոր անասուններ՝ 76 գլուխ, ձիեր՝ 21 գլուխ. խոզեր՝ 6 գլուխ, ճագարներ 18 գլուխ թռչուն 246 հատ: Համայնքի բնակիչները գյուղ-մթերքները իրացնում են Վանաձորում, հոգալլով օրվա հացը:

Անհրաժեշտ է ստեղծել կաթի մսի մթերման կետեր, որը հնարավորություն կտա զարգացնել անասնապահությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ (հա)

	Ընդամենը	Համայնքում առկա	Պետական	Իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն

Համայնքի վարչական տարածքը այդ թվում	1043,27	299,83	682,91	60,53
Գյուղատնտեսական նշանակության հողեր	701,17	293,96	782,73	24,48
Բանկելի շինությունների տակ հողեր	16,22	-	-	16,22
Արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր	16,06	0,02	-	16,04
Ճանապարհների տակ	0,79	-	0,79	-
Անտառային հողեր	298,61	-	298,61	-
Ջրային ֆոնդի հողեր	0,78	-	0,78	-
Այլ	9,64	5,85	-	3,79

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Խառատյանի

Համայնքի ավագանի՝

1.Զեյնար Զոհրանյան

2. Սուսաննա Խառատյան

3. Քրիստինե Խառատյան

4. Ռոստոմ Խառատյան

5. Էդիկ Մովսիսյան

Ուշեղ կողմեր

- Անտառի առկայություն
- Խմելու ջրի առկայություն
- Աշխատուժի առկայություն
- Անասնապահության զարգացման հնարավորություն

Թույլ կողմեր

- Գործազրկություն
- Տրանսպորտի բացակայություն
- Բուժ. կետի բացակայություն
- Դպրոցի բացակայություն

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՊԱՏՃԱՌԱՀԵՏևԱՆՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ ԸՍՏ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ

Հիմնահարց	Պատճառը	Հետևանքը	Այլ ընտրանքային լուծումներ	Պետական մարմին դոնոր կազմակերպություն
Գազաֆիկացում	Ֆինանսների բացակայություն	Բնակիչները կապահովեն գազով	Անհրաժեշտ է պետական աջակցություն	ՀՀ կառավարություն Դոնոր կազմակերպություն Բարերար
Բուժ կետ	Ֆինանսների բացակայություն	Բնակչությունը կունենա բարեկեցիկ սպասարկում	Անհրաժեշտ է պետական աջակցություն	ՀՀ կառավարություն Բարերար
Ջրամբարի վերանորոգում և տարածքի բարեկարգում	Ֆինանսների բացակայություն	Կբարեկարգվի	Անհրաժեշտ է պետական աջակցություն	ՀՀ կառավարություն Համայնքապետարան Դոնոր կազմակերպություն
Ճանապարհների վերանորոգում	Ֆինանսների բացակայություն	Կբարելավի ավտոմեքենաների և մարդկանց տեղաշարժը	Անհրաժեշտ է պետական աջակցություն	ՀՀ կառավարություն Համայնքապետարան Բարերար

7.Ռազմավարություն

Համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման ծրագիրը Ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակույթային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկարգ նգրավիչ, զարգացնել գյուղատնտեսության ավանդական ճյուղերը (անասնապահություն և հողագործություն): Համայնքում ստեղծել պայմաններ անասնապահական արտադրանքի իրացման դժվարությունները հաղթահարելու համար:

ԾՐԱԳԻՐ 1

Ճանապարհների բարեկարգում և լուսավորություն

Անտառաշեն համայնքում ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման նպատակով իրականացնել «Ճանապարհների բարեկարգում» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1.Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.3.Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:

1.4.Հեղեղատարներ կառուցել:

1.5.Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն անցկացնել:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Անտառաշեն համայնքի բոլոր բնակիչները: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, փոխանցել գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ:Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, կահավորված չեն և բացակայում է փողոցային լուսավորությունը: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի:

ԾՐԱԳԻՐ 2

Անտառաշեն համայնքի գազաֆիկացում

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Անտառաշեն համայնքի բոլոր բնակիչները: Համայնքի բյուջեում համապատասխան միջոցներ չիլինելու պատճառով անհրաժեշտ է գտնել նմանատիպ աշխատանք կատարող դոնոր ընկերություն:

ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ